

469

ՆԱՊՈԼԵՈՆ

ԼԵՆԻՆՍԿԻ ԿՐԻՍ

8  
Ն - 34

1916

19 MAY 2005

F 2 NOV 2009

8  
9-34 48

ՀՐԱՏԱՐԱԿ Գ ԳԱԼՍՏԵԱՆԻ № 91

# ՆԱԳՈՒԷՅԻ

## ԼԵՀԱՑԻ ԿԻՆԸ

Փարզվ. Ս. Ն.



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Էյեֆ. Տպ. Ն. Աղանեանի Պոլից. 7.  
1916

10 JUL 2013

469

# ՆԱՊՕԼԵՕՆԻ ԼԵՀԱՑԻ ԿԻՆԸ

Մայր հայրենիք, գերեզման կիջնեմ  
ազատութեան օրդ չը տեսած...  
Նեկրասով

1807 թւին Նապօլէօնը առաջին անգամ մտաւ Վարշաւա: Լեհ ազնւականութիւնը յանձին նրա տեսներով Լեհաստանի փրկչին, գլխապատառ աշխատում էր ցոյց տալ նրան փայլուն քնդունելութիւն: Պարահանդէսները և ճաշկերոյթները հետևում էին մէկը միւսին: Ճաշկերոյթներից մէկում կայսրը սկսեց առանձին ուշադրութիւն դարձնել իշխանուհի Լիւբօմիրսկայի վրա և իրան պահել մի տեսակ տարօրինակ: Նա խուսափում էր խօսակցել իշխանուհու հետ, բայց, ըստ երևոյթին, հաճոյք էր գգում նրան նայելուց:

Կայսրին շրջապատող լեհ մեծամեծները զանազան գուշակութիւններ էին անում, թէ ինչ պէտք էր նշանակէր այդ տարօրինակ վարմունքը: Վերջապէս, գեներալ Դիւրօկը բացատրեց, թէ ինչու մն է բանը: Իշխանուհի Լիւբօմիրսկայան՝ իր ճգնաժամով, Նապօլէօնին յիշեցնում էր մի սքանչելի անձանօթուհու, որ ողջունել էր նրան Վարշաւայի ճանապարհին Բրօնա աւանում:

Թէ ով էր այդ անձանօթուհին, բոլորովին անհնար էր իմանալ, չնայած Դիւրօկի ամենա-



2384-54

հոգածու նկարագրութեան. — «Շիկահեր, գրեթէ երեխայ, մեծ կապոյտ աչքերով, որ շատ միամիտ են, բայց լի աւիւնով. նրա դէմքը ունի քնքուշ, վարդագոյն մորթ. փոքրահասակ է, բայց շատ վայելչակազմ»:

Վերջապէս, իշխան Իւզէֆ Պօնեատովսկին իշխանուհի Եաբլօնօվսկայից իմացաւ, որ Բրօնայում Նապօլէօնին ողջունել է իր տալը, կոմսուհի Մարիա Կօլօննա Վալևիչ-Վալևսկայան, ծնեալ Լաչինսկայան:

Կոմս Անաստասի Վալևսկին հասակն առած մարդ էր. նրա աւագ թուր իննը տարով մեծ էր իր՝ կոմսի, ջահել, տասնիննը տարեկան կրնոջից: Բայց նա շատ հարուստ էր և գլխաւորն էր լեհական հին տոհմերից մէկի: Այս ամենը այնպէս գրաւեց ջահել Մարիայի մօրը, որ սա հարկադրեց իր աղջկան գրեթէ դպրոցական նստարանից մարդու գնալ ծերունուն:

Երեք տարի Մարիան իր ամուսնու հետ ապրեց աւանձնացած Վալևսկ աւանում, ոչ մի անգամ զուրս չը դալով այնտեղից. բայց կայսրի գալուստը ստիպեց ջերմ հայրենասէր ծերունուն գնալ Վարշաւա:

Մարիան այնքան համեստ էր, անվստահ, և դրա հետ էլ ոչ մի մօտիկ ծանօթ չունէր Վարշաւայի փայլուն հասարակութեան մէջ, այնպէս որ, կատարելով անհրաժեշտ այցելութիւնները,

աղմկալի մայրաքաղաքում ապրում էր նոյն աւանձնացած կեանքով, ինչ-որ գիւղում: Չնայած նոյնիսկ իր գեղեցկութեան, նա չնկատեց հասարակութեան մէջ, և ոչ ոքի մետքը չեկաւ, թէ Նապօլէօնի սքանչելի անձանօթուհին և համեստ կոմսուհի Վալևսկայան՝ միևնոյն անձն է:

Մայրաքաղաքում էլ, ինչպէս գիւղում, նա իր ժամանակի մեծ մասը նւիրում էր աղօթքի: Մէր առ Աստուած և սէր դէպի հայրենիքը—միայն այս երկու ազնիւ կիրքը ունէր նրա հոգին: Միայն սրանք կարող էին յուզել նրա մեղմ հոգին, ալեկոծել նրա համեստ բնաւորութիւնը:

Հէնց որ իշխ. Պօնեատովսկին իմացաւ իւր մասին է մտածում Նապօլէօնը, անմիջապէս տաք կերպով գործի ձեռնարկեց: Իշխանը իսկոյն և եթ մեկնեց Վալևսկիներէ մօտ և հրաւիրեց նրբանց իր տունը պարահանդէսի, որը նա սարքում էր ի պատիւ կայսրի:

Մարիան կտրականապէս հրաժարեց պարահանդէս գնալ: Չնայած իր ջահելութեան, նա գեղեցիկ կերպով հասկացաւ ինչու յանկարծ իշխ. Պօնեատովսկին այդպիսի ուշադրութեամբ բռնակեց դէպի ինքը և իր ամուսինը: Նոյն իշխանուհի Եաբլօնօվսկայից նա արդէն մի քանի բան էր իմացել Բրօնի անձանօթուհուն որոնելու մասին: Իմանալով Մարիայի հրաժարումը, իշխան Պօնեատովսկուն օգնութեան հասան լեհ

հասարակութեան ամենաականաւոր, յարգւած ներկայացուցիչները, համոզելու Մարիային, որ նա գնա պարահանդէս: Ինքը, կոմս Վալեսկին, ի հարկէ, միանգամայն չիմանալով բանն ինչու մնէ, և շուած այդօրինակ ընդհանուր ուշադրութիւնից, պնդեց, որ Մարիան ընդունի հրաւէրը:

Մարիան պարահանդէս գնաց ամենահամեստ զարդերով. — սպիտակ կերպասի զգեստներ, մազերի մէջ տերեւների պսակ, պարանոցին մարգարիտ և ոչ մի ադամանդ:

Նապօլէօնը, ի հարկէ, նախօրօք զգուշացւած, պարահանդէսին մօտեցաւ Մարիային և ասաց միայն. «Սպիտակը չի սազում սպիտակին, տիրուհի», ուղիղ նայեց նրան մի րոպէ և մեկնեց:

Այս խօսքերը բոլորովին անհասկանալի մընացին շրջապատողներին և հէնց իրա Մարիայի համար: Չպատասխանելով ոչ մի հարցի, Մարիան անմիջապէս մեկնեց տուն:

Հէնց որ Մարիան տուն դարձաւ, նրան յանձնեցին հետեւեալ գրութիւնը.

«Ես տեսայ միան Ձեզ, ես հիացայ միայն Ձեզնով, ես ցանկանում եմ միայն Ձեզ: Անմիջական պատասխանով հանգստացրէք իմ բորբուն անհամբերութիւնը: Ն.»:

Մարիան պատուեց գրութիւնը, յայտնե-

լով, որ ոչ մի պատասխան չի լինի:

Յաջորդ օրը դարձեալ գրութիւն. դրան Մարիան նոյնիսկ չը կարդաց: Գլխացաւը պատրուակ բռնելով նա հրաժարեց իշխ. Պօնեատօվսկու մօտ ճաշի գնալուց և փակեց իր նընջարանում:

Բայց, աւանդ, ոչինչ չօգնեց: Կոմս Անաստաս Վալեսկին նրա ննջարանը բերեց Պօնեատօվսկուն և ուրիշ մեծամեծների, որոնք կրկին անգամ սկսեցին համոզել նրան, իսկ առաւել յարգանք վայելող մի անձնաւորութիւն, Վարշաւայի այն ժամանակաւ արքեպիսկոպոսը, խիստ ձեռով ասաց նրան.

— Ամբողջ ազգի համար անագին, կարեւոր նշանակութիւն ունեցող հանգամանքների հանդէպ պէտք է զիջել ամեն ինչ: Եւ ճաշին մասնակցելուց դուք չէք կարող հրաժարուել, եթէ չէք ցանկանում վատ լեհուհի դառնալ:

Մարիան ստիպւած եղաւ գնալ պալատ, որ պատկանում էր իշխ. Պօնեատօվսկուն: Այնտեղ իշխանի ծանօթ ֆրանսուհի Լուիզա Վօբան, Մեծ Յեղափոխութեան էմիգրանտուհիներին մէկը, պէտք է սովորեցնէր Մարիային արքունիքի մէջ վարելու ձևերը և անհրաժեշտ խորհուրդներ տար նրան արդուզարդի մասին:

Այսպիսով Մարիայի ձեռք ու ոտքը կապւած էին: Լուիզա Վօբանը լինելով նախկին

Քուրբօսների պալատական կանանցից մէկը, ի հարկէ, ամենաբարձր գործ էր համարում իր համար այն, որ ինքը կարող էր կատարել,— իր թագաւորին տալ սիրուհի: Միևնոյն էր թէ ինչ անուն կունենար այդ թագաւորը.— Լիւզովիկոս XV, թէ Նապօլէօն: Բայց զգալով, որ միայն իր ջանքերը հերիք չեն Մարիայի յամառութիւնը կոտորելու, Լուիզան օգնութեան կանչեց Վալեսկայի ընկերուհի, ոմն տիկին Աբրամօվիչի: Վերջինս, հայրենասիրական խանդով լցւած, շարունակ կրկնում էր միևնոյն բանը. «ամենը, ամենը այդ սրբազան գործի համար»:

Ամենքը միացան խեղճ Մարիայի դէմ. նոյնիսկ սրա մայրը և եղբայրը միացան դաւաճիւրներին. մինչև անգամ ամուսինը այնպէս էր ձևացնում, որ ոչինչ չի հասկանում, և այդ ամենի մէջ տեսնում է միայն բարեկիրթ ուշադրութիւն դէպի իր անձը և դէպի իր կինը:

Ոչ միայն հարազատները, այլ,— որ առաւել կարևորն է,— հասարակութեան ամենաականաւոր ներկայացուցիչները, հայրենիքի լաւագոյն պատրիօտները, ասում էին նրան.

— Եթէ դուք տղամարդ լինէիք, հայրենիքին պէտք է տայիք ձեր ամբողջ կեանքը: Իբրև կին, դուք չէք կարող պաշտպանել նրան Ֆիդիքական ոյժով. բայց գոյութիւն ունին այլ տեսակի զոհաբերութիւններ, որ դուք կարող էք

անել հայրենիքին, և դրանք դուք պէտք է վերցընէք ձեզ վրայ, որքան էլ նրանք ծանր լինեն ձեզ համար:

Մարիայի խոստովանահայրը, իբրև օրինակ ցոյց տւեց նրան աւետարանական էսֆիրան, որ իրան յանձնեց Արտաքսերքսին յանուն Իսրայէլի ժողովրդի փրկութեան:

Իսկ ի լրումն այս ամենի, Մարիան ստացաւ հետևեալ գրութիւնը Նապօլէօնից.

«Ես ձեզ դուր չեկա՛յ: Իսկ մինչդեռ ես իրաւունք ունէ՛մ հակառակը յուսալու: Սխալե՛լ եմ արդեօք ես: Ձեր մղումը դէպի ինձ թուլացել է, իսկ իմը դէպի ձեզ աճում է: Դուք ինձ զրկել էք հանգստից: Տւէք ինձ փէքր ինչ ուրախութիւն, փէքր ինչ բախտաւորութիւն իմ ազգատ հոգուն, որ պատրաստ է պաշտել ձեզ... Օ... Եկէք, եկէք... Ձեր ամենափոքր ցանկութիւնը կը կատարուի: Ձեր հայրենիքը ինձ համար աւելի թանգ կը լինի, եթէ դուք խղճաք իմ խեղճ սրտին: Ն.»:

Լեհաստանի բախտը Մարիայի ձեռքում! նրանից է կախած հայրենիքի վերածնութիւնը!

Որպիսի կուրացուցիչ երազ: Բայց ի՞նչ պէտք է անել նրա համար: Պատասխանը պատրաստ է. Նապօլէօնը, թէև կայսր, բայց տղամարդ է, այն էլ սիրահարւած տղամարդ:

Եւ Մարիան, տեսած լինելով միայն եօ-

Թանասունամեայ ծերուկի գրեթէ պլատոնական շոյանքները, որոնք նրա մէջ լաւագոյն զէպքում կարող էին առաջ բերել անտարբերութիւն, գուցէ նաև զգւանք յարուցէին նրա մէջ զէպի կըրքի ամեն տեսակ արտայայտութիւն, — ակամայ զիջում է այն բանի առաջ, ինչ որ պահանջում են իրանից:

Բայց նա երազող և խանդավառ կին էր: Նա ակամայ մտածում էր, թէ գուցէ Նապօլէօնը բաւականանայ բարեկամութեամբ, թէ կարող է պատահել, որ երկուսի հոգին ձուլւեն միասին աստուածային ներդաշնակութեան մէջ:

Իրանք վտանգաւոր երազանքներ էին. բայց երազանքներ էին՝ յատուկ այդ բոմանտիք դարաշրջանին:

Եւ, բացի այդ, երիտասարդ կնոջ սիրար սկսում է խղճահարութիւն զգալ: Ձէ որ նրա համակրութիւնն է խնդրում աշխարհի կէսի տէրը: Հօօր իշխող, բախտի սիրելի, ոյժի և հմայքի կատարեալ ծաղկման մէջ մարդ, բայց այնուամենայնիւ նա դանգատում է իր մենակութեան մասին. աշխարհը ի է լուրերով նրա՝ ժողեֆինայի հետ ունեցած իբր անաջող պսակի մասին, վերջնիս արկածների և զաւաճանութիւնների մասին, և այն մասին, որ ժողեֆինան առաւել հասակով է Նապօլէօնից:

Կոմսուհի Մարիան գնաց ճաշի: Կայսրը

դուրս գալով գահլիճ և նրան տեսնելով, ասաց շատ հասարակ ձևով.

«Նա կարծում էի, որ դուք տկար էք. արդեօք բաւական կազդուրւել էք»: Այս հասարակ նախադասութիւնը, որ իր մէջ կասկած էր բովանդակում, իր հասարակ լինելու պատճառով վերին աստիճանի քաղաքավարի թւաց Մարիային:

Ճաշից յետոյ ամենքը մեկնեցին, իսկ Մարիան տակաւին մնաց պալատում, սիկ. Վօբանի մօտ, ուր հաւաքւել էին բոլոր մեծամեծները, համոզելու Մարիային՝ զիջել, հաւատացնելով որ նա վատ լեհուհի է, որ Նապօլէօնին ոչ մի բան չի կարելի մերժել:

Ամենքը պատրաստ էին հնարաւորութեան չափ թեթեացնել Մարիայի առաջին քայլը: Եւ վճուեց, որ նա ոչ մի տեղ չի գնայ պալատից, կը մնայ մինչև երեկոյ, իսկ երեկոյեան կը դան նրա ետևից և կը տանեն նրան: Իսկ ինչ կասի ամուսինը: Ա՛խ ամուսինը՝. նա ամեն բանի համաձայն է յանուն Լեհաստանի փրկութեան:

Իանդաղ սահեցին սպասողութեան ժամերը: Կէս զիշերին մօտ Մարիային տանելու եկաւ մի փակ կառք: Լուիզա Վօբանը և Մարիայի ընկերուհին շտապով հազցրին նրան, երեսը ծածկեցին քօղով և ձանապարհ դրին:

Նապօլէօնը անհամբեր սպասում էր երկար

ժամանակ: Մարիան սկզբում վախեցած լաց եղաւ, բայց Նապօլէօնը կարողացաւ նրան հանգըստացնել և միայն այն ատեն, երբ Նապօլէօնը խօսք բացեց նրա «ծեր ամուսնու» մասին, Մարիայի առջ պատկերացաւ ամբողջ սարսափը և կոպտութիւնը այն բանի, ինչ որ պահանջում էին իրանից: Նա ցատկեց տեղից և նետուեց դէպի դռները, կամենալով փախչել:

Նապօլէօնը սաստիկ զարմացած էր: Իսկ ձվ է այն կինը, որ համաձայնել էր գիշերը գալ իր մօտ և այժմ խեղդում է հեկեկանքներից, — մի ճարպիկ կօկէտունի, թէ միամիտ գեղջկուհու մէկը:

Նապօլէօնը հոգածութեամբ նրան նստացրեց թաղկաթոս և սկսեց մեղմ, արտայայտութիւններ որոնելով, որպէս զի չվիրաւորի նրան, բայց անողոք տրամաբանութեամբ, հարց ու փորձ անել նրան և, ի հարկէ, իմացաւ ամենը, ինչ կատարւել էր Մարիայի շուրջը վերջին օրերի ընթացքում:

Նապօլէօնին, — որ սովոր էր այն ժամանակաւ պարիզուհիների թեթևամիտ վերաբերմունքին դէպի կրօնը և բարոյականութիւնը, — Մարիան թւաց ինչ-որ տարօրինակ էակ: Առանձնապէս նա դժւարանում էր հասկանալ այն պարզ հակասութիւնը, որ կար նրա, Մարիայի՝ ամուսնուն և պարտքին հաւատարիմ մնալու ցանկու-

թեան և գիշերը իր մօտ գալու միջև:

Հետզհետէ Նապօլէօնը ամեն ինչ պարզեց իր համար: Նրանց զրոյցը շարունակեց մինչև գիշերուայ երեք ժամը, և Մարիան Նապօլէօնի մօտից հեռացաւ այնպէս անմեղ, ինչպէս եկել էր, խոստանալով կրկին գալ:

Թւում էր թէ իրականանում էր Մարիայի երազը: Այսօր Նապօլէօնը ապետի պէս էր, ինչո՞ւ չպէտք է նա նոյնը լինի և վաղը:

Եւ վաղը և միւս օրը նա դարձեալ եկաւ տեսակցութեան: Եւ... ի հարկէ, յետոյ պատահեց այն, ինչ-որ պէտք է պատահէր:

Այսպիսի տեսակցութիւններից մէկի ժամանակ Նապօլէօնը, կատաղած Մարիայի յամուսնութիւնից, յատակին խփեց ձեռքին բռնած ժամացոյցը և գոչեց.

— Ի՞նչ իսկական լեհուհի էք: Ի՞նչ մի աւելորդ անգամ ևս հաստատում էք իմ կարծիքը ձեր ազգի մասին: Ձեզ մօտ ամեն ինչ արւում է շահի համար և ոչ մի բանում հետևողականութիւն չկայ: Ձեր խանդավառութիւնը աղմուկալի է և ոգելից. դուք չէք կարողանում կառավարել ձեր զգացմունքները: Ինչո՞ւ համար դուք շտապեցիք Բրօնա ինձ ողջունելու, և այնուհետև թագնւեցիք անհեաք: Եւ իմացէք, ինչպէս որ փշուր-փշուր եղաւ այս ժամացոյցը, այնպէս էլ ես փոշի կը դարձնեմ ձեզ հաստանի

բոլոր յոյսերը, եթէ դուք ծայրայեղութեան հասցնէք և մերժէք ինձ:

Այս սպառնալիքների առաջ խեղճ Մարիան գիշեց. և այդ ժամանակից սկսած ամեն երեկոյ գալիս էր նա պալատ, հնազանդօրէն ընդունում Նապօլէօնի շոյանքները և համբերատարութեամբ սպասում խոստացած շնորհին:

Եւ եթէ Մարիան յանձնեց Նապօլէօնին, բայց դրա համար նա պայման դրեց — վերականգնել Լեհաստանը: Նա հրաժարւում էր բոլոր ընծաներից, վերադարձնում էր բոլոր ազամանդները և ոչինչ չէր խնդրում իր ընտանիքի համար: Նրան հարկաւոր էր և՛ շատ քիչ բան և՛ շատ մեծ բան ինքն իրան արդարացնելու համար. հարկաւոր էր Լեհաստանի վերականգնումը:

Նապօլէօնը խանդաղատանքի մէջ էր. նրան հանդիպել էր մի համեստ, անշահ կին, ոգևորւած խոր սիրով դէպի իր հայրենիքը, իր մէջ մարմնացնելով այն ամենը, ինչ-որ առաւել զըրաւիչ և ազնիւ բան կայ լեհ ազգի մէջ:

Մարիան կանացի այն տիպն էր, որի մասին երագում էր Նապօլէօնը և ուզում էր գրտնել ժողէֆինայի մէջ: Մարիան մեղմ էր, քընքոյշ, ուշադիր, հնազանդ, ամբողջովին պատկանում էր նրան՝ Նապօլէօնին, ապրում էր նրանով: Այս բանը աւելի էր խանդաղատեցընում Նապօլէօնին և նա, քնքշանքի բօլէներին,

Մարիային անւանում էր «Սպարտուհի»:

Իր ռազմական շտաբը հաստատելով Օստերօդում, Նապօլէօնը այնտեղ կանչեց և Մարիային: Այնտեղ Մարիան վարում էր լուռ, առանձնացած կեանք, զբաղւելով ընթերցանութեամբ կամ ձեռագործով: Մարիայի սենեակը կից էր Նապօլէօնի կաբինէտին, և ոչ ոք, բացի Մարիայի սպասուհուց և Նապօլէօնի նշանաւոր սենեկապահ Մամելիւք Բուստանից\*) մուտք չունէր այնտեղ:

Մի անգամ պարսից զեապանը իր արքայի ընծաների թւում Նապօլէօնին մատուցեց և մի քանի թանկագին շալեր ժողէֆինայի համար: Նապօլէօնը ցանկացաւ, որ Մարիան զբանցից ընտրի իր համար ինչ-որ դուր կը վար իրան, բայց Մարիան հրաժարւեց կտրականապէս: Եւ միայն, երկար խնդիրքներից յետոյ, համաձայնեց վերցընել մի հասարակ կապտագոյն շալ իր ընկերուհու համար:

Այս անփոփոխ անշահախնդրութիւնը յուզեց Նապօլէօնին:

— Զեր տգամարդիկ քաջ և անձնէր են, — ասաց նա, — իսկ կանայք հրապուրիչ և ան-

\*) Բուստան կամ Ռոստոմ — հայ է, որին Նապօլէօնը վերցրել էր դէպի արևելք կատարած արշաւանքի միջոցին: Ժամանակակից Ֆրանսիական զբամատուրդ էր. Բուստանը սրա ժառանգներից է: Ծնթ. Թրգմ.

շահախնդիր: Լեհերը — սքանչելի ազգ են, և վաղ թէ ուշ ես խոստանում եմ վերականգնել Լեհաստանը:

Մարիան ընկաւ նրա ոտքերը և սկսեց ջերմապէս շնորհակալ լինել նրանից:

— Այդ ընծան, ինչպէս տեսնում եմ, դուք կընդունէիք առանց ցերեմօնիայի... Սպասեցէք մի փոքր. քաղաքական անցքերը չեն կատարուում այնպէս արագ, ինչպէս ճակատամարտները. դա այնքան էլ հեշտ չի և պահանջում է շատ ժամանակ:

Հէնց որ սկսւեցին ռազմական գործողութիւնները, Նապօլէօնը Մարիային ուղարկեց տուն՝ կալւածքը, ուր և նա մնաց մինչև Տիլզիտեան հաշտութիւնը:

Տիլզիտը խորտակեց Մարիայի բոլոր սպասելիքները: Լեհաստանը չը վերականգնւեց, Նապօլէօնը չկատարեց իր խոստումը:

Բայց կայսրը սիրում էր Մարիային, չէր կարողանում ընդմիշտ բաժանել նրանից և խնդրեց նրան իր հետ միասին գնալ Պարիզ: Մարիան երկար ժամանակ չէր համաձայնում, և զիջեց միայն բարեկամների և յարգելի անձանց յորդորներին: Նրան ասում էին, որ նա այնտեղ չի լինի պատահական մի սիրուհի, այլ իր ժողովրդի դեսպանուհին, կը լինի Նապօլէօնի Լեհացի կիներ և նրա, Նապօլէօնի սիրտը ամուր

կապերով կը կապի Լեհաստանի բազդի հետ: Եւ, վերջապէս, Մարիայի լուռ ներկայութիւնը միշտ կը յիշեցնի Նապօլէօնին իր խոստումները և չը հատուցած պարտքի մասին:

Մարիան գնաց Պարիզ: 1809 թւին նա Նապօլէօնի հետ անցաւ Վիէննա: Այստեղ նա իրան մայր դպաց, և Վիէննայի հաշտութիւնից յետոյ մեկնեց Վալիսկ կալւածքը, ուր և մայիսի 4-ին ծնւեց կոմս Ալեքսանդր Կօլօննա-Վալիսկ-Վալիսկին, Նապօլէօնի որդին:

Արդեօք Մարիայի ներկայութիւնը չէր պատճառը, որ Նապօլէօնը տատանումներ էր ցոյց տալիս Լեհաստանի նկատմամբ Աւստրիայի հետ բանակցութիւններ վարելու միջոցին, ներկայութիւնը այն կնոջ, որին նա խոստացել էր վերականգնել իր հայրենիքը:

1810 թւի վերջում Մարիան վերադարձաւ Պարիզ, իր հետ տանելով նորածին մանկանը: Մարիայի համար մի գեղեցիկ հիւրանոց էր պատրաստած Ծօսէ-դ'Անտէն փողոցի վրա և նշանակած էր թօշակ — տասը հազար ֆրանկ ամսական: Այժմ, երբ Մարիան դարձել էր Նապօլէօնի որդու մայրը, համաձայնում էր իր ապրուստի բոլոր հոգսերը թողնել Նապօլէօնի վրա, համաձայնում էր ընդունել նրանից և մի քանի ողորմածութիւններ:

Կայսրը յաճախ այցելում էր Մարիային,

կամ նրան որդու հետ հրաւիրում էր իր մօտ պաշտօն: Բայց, ընդհանրապէս, Մարիան Պարիզում ապրում էր շատ համեստ, քաշուում էր մեծ հասարակութիւնից: Եթէ նա հանքային ջրերն էլ գնում էր, միշտ կամ մօր հետ էր գնում, կամ իր տալ իշխանուհի Եարլօնօվսկայի հետ:

1812 թւի սկզբին, երբ պատերազմ էր նախատեսնւում Ռուսաստանի դէմ, Նապօլէօնը հոգ էր տանում իր որդին ապահովել Մարիայից, և վերջը նրա, որդու համար մայօրատ\*) հաստատեց Ֆրանսիայում կայսերական կաբինէտի սեփական կալածքներէից: Այդ մայօրատի կառավարութիւնը յանձնեց Մարիային մինչև որդու շափահասութիւնը, իսկ այնուհետև, կալածները որդուն յանձնելուց յետոյ, Մարիան որդուց պէտք է ստանար տարեկան տասնուհինգ հազար:

Հէնց որ սկսեց 1812 թւի պատերազմը, Մարիան եկաւ Վարշաւա, որպէսզի տեղում լինի իր հայրենիքի վերածնութեան րօպէին: Իսկապէս Մարիան, ի հարկէ, յոյս ունէր, որ իրան կը կանչեն գլխաւոր շտաբը, բայց Նապօլէօնը, իր պսակից յետոյ, խուսափում էր ամեն տեսակ աւիթներից, որ կարող էին պատճառ ծառայել իրան նախատելու թեթևամտութեան մէջ:

\*) կալածք, գոյք, որին իրաւունք ունի միայն անդրանիկ գաւառի Մանօթ. Թարգմ.

Վերջը Մարիան անյարմար գաւառ մնալ Վարշաւայում և հեռացաւ իր Լօվիչ կալածք, ուր և ապրեց մինչև այն օրը, երբ մէկը միւսի ետևից կատարելապէս խորտակեցին նրա բոլոր յոյսերը:

Վրա հասաւ Փօնտենբըլօյի սարսափելի օրը: Ամենքից մոռացւած կայսրը ապաստան էր փնտրում մահւան դուռն ընկած: Մենակ միայն Մարիան եկաւ այնտեղ և ամբողջ գիշեր նստեց նախասենեակում, սպասելով, թէ Նապօլէօնը արդեօք չի կանչի իրան:

Նապօլէօնը կլանւած իր մտքերով, տանջանքներից ճնշւած, Մարիայի մասին յիշեց միայն մի ժամ յետոյ, երբ նա արդէն գնացել էր:

— Խեղճ կին, նա պիտի մտածի, թէ իրան մոռացել են, — ասում է Նապօլէօնը և նամակ գրում նրան.

«Մարիա, ես ստացայ ձեր նամակը: Ձեր զգացմունքները արժանի են ձեր գեղեցիկ հոգուն և ձեր բարի սրտին: Երբ դուք, ձեր գործերը կարգի բերելով, կը մեկնէք Պիզա, հանձնելու ջրերը, ես սիրով կը տեսնեմ ձեզ և քային ջրերը, ես սիրով կը տեսնեմ ձեզ և ձեր որդու հետ, որի վերաբերմամբ իմ զգածները մնում են միշտ անփոփոխ: Մնացէք ցումները մնում են միշտ անփոփոխ: Մնացէք ցումները, չբարկանաք, յիշեցէք ինձ սիրով և երբէք մի կասկածէք իմ մասին: Ն.»:

Ելբա... Երբ բախար դաւաճանեց իր սիրե-



ցեալին, Մարիան յայտնապէս հետեւեց կայսրին  
և գնաց նրա մօտ: Բայց Նապօլէօնը նրան ըն-  
դունեց սառը կերպով, և Մարիան էլբայի վրա  
մնաց միայն մի օր: Հաւատարիմ, անձնւէր ըն-  
կերուհին զոհաբերւեց անհաւատարիմ կնոջը:

Եջանաւոր Հարիւր Օրերի ժամանակ Մա-  
րիան շտապեց գնալ Պարիզ, և այն կանանց  
չբջանում, որոնք անձնւիրաբար վերապրում  
էին կայսեր փառքը, Մարիային պէտք է համա-  
րել առաջինը:

Բայց, Սուրբ Հեղինէից յետոյ, Մարիան ի-  
բան համարեց ազատ: Նրա ամուսինը, կոմս  
Վալեսկին մեռաւ 1814 թւին, իսկ 1816 թւին  
նա ամուսնացաւ Նապօլէօնի ազգական կոմս  
դ'Օրնանօյի հետ: Այս ամուսնութիւնը շատ  
զայրացրեց Նապօլէօնին, որ տակաւին ամենա-  
քնքոյշ զգացումներ էր տածում դէպի Մարիան:

Նոյնիսկ այս անձնւէր սիրաւ մոռացաւ  
նրան, դաւաճանեց նրան:

Մարիայի նոր բախտը շատ էլ երկարատև  
չեղաւ: 1817 թւին նա որդի ծնեց և այդ տար-  
ւայ վերջին էլ մեռաւ:

Միակը, որին անդաւաճան և սուրբ սիրով  
սիրում էր Մարիան, դա—իր հայրենիքն էր:

«Ազգային գրադարան»



NL0167948

